Պայէզիտ. — Bayezid.

քին առ համանուն լերամբ, ուր և Ա՛ՐԱՐ գեղջ և աւերակք։ — Հիւսիսակողմն Մալազկերտոյ ԹՕՐԼՈՒ կոչի և բազում շինից աւերակք են անդ, և երկիրն երիզուտ է, և Թուի ԴԱԼԱՌ գաւառ Տուրուբերանի։

Զ. ՊԱՅԷԶԻՏ ԳԱՒԱՌ

83. ՊԱՅԷԶԻՏ կուսակալութիւն անձուկ է սահմանաւ, և ձգի յարևելից 'ի սահմանակցութենէ բաժնի Ռուսաց և Պարսից՝ յարևմուտս ցԲասէն. 'ի հիւսիսոյ սահման ունելով զմասն Բասենոյ և 'զկաղզուան Ղարսայ, 'ի հարաւոյ զՄալազկերտ և զնահանգն Վանայ. լերամբք բարձամբք պարսպեալ ամենուստ, յորոց և Բարձրն Այրարատ 'ի հիւսիսի արևելակողմանն անջրպետ ընդ բաժինն Պարսից. և Ալ-պաղ 'ի միջավայրս հարաւակողմանն, յորմէ բղխեն արևելեան ակունք Եփրատայ, որոյ ընկալեալ և յարևմտից կողմանէն վտակս յոլովս՝ առատանայ և խաղայ ընդ հարաւ 'ի Մալազկերտ։ — Յարևմտակողմանն նահանգիս առաջին վիճակ է փոքր՝ ԽԱՐԻ-ԵՆԱՋԸ ընդ մէջ Բասենոյ և Թորլուի, ջրաւէտ և խոտաւէտ երկիր գաշտաձև լեռնոտպատ. յորում առ Տաղար կամ Տաւէր գիւղիս յերեսս քարալերին վիմափորեալ կայ սեպագիր տախտակ մեծ, և կոչի Եաղլըբ-դաշ ինքն և լեառնն, և գեղջկ մի Քրդաց առ նովաւ։ Ի հիւսիսի վիճակիս միջատահման նորա և Բասենոյ և Ալաշկերտաւ ամբառնայ սրակատար Քէօ-ի լեառն, որ է Սաւաս կամ Սուսաւէր, ևս և Ջրաբաշի վանն բազմութեան աղբերականցն, իբրև 9000' բարձր. անուանի ուխտատեղի վանն Նահատակութեանն 'ի նմա սրբոց Սուքիասանց Քաջից, որոց և նահատակութեան տեղին և աղբիւրն բղխեալ 'ի նոցին տաղթից՝ ցուցանի առ ստորոտովն. 'ի հնումն վիճակէր Բագրևանդ գաւառի։

84. ԱԼԱՇԿԵՐՏ վիճակ ընդարձակ, յելից Խալիսաղեայ, 'ի հիւսիսոյ Խամուրայ, յարևմտից Նահիրի և 'ի հարաւոյ Շահեղ լերանց, որք անջրպետեն զկաղզուան։ Միջավայր գաւառիս յոր ճապաղին բաղուկք Եփրատայ՝ գաշտավայր է ընդարձակ, 5000' և աւելի բարձր, պարարտ և գեղեցիկ. գլխաւոր տեղի գաւառին է ԹՕՓՐԱՔԱԼԷ քաղաքաւան, 'ի հնումն ԿԱՂԱՐՇԱԿԵՐՏ, 'ի ստորոտս Շահեղի 'ի բարձու 5945', առ վտակաւ փոքրու, պարսպաւք և բերդաւ 'ի սրածայր բլրի, զոր փոքր մի խանգարեցին Ռուսք, և զՀայ բնակիչս երկրին 'ի գաղութ տարան. և մնան այժմ յաւանին 50 տուն Հայոց և իբր 200 Տաճկաց։ Իբրև 40 գեղք են Ալաշկերտայ։ — Յելից Ալաշկերտայ կան ՆԱՀԻՐ և ԽԱՄՈՒՐ վիճակք. առաջնոյն գլխաւոր գեղք են Օնճալը, Գարագիլիսէ՝ յայմմէ Եփրատայ. երկրորդին բերդաւանքն Խամուր և Շան-Գալէ յահեկէ կամ 'ի հարաւոյ գեղոյն։

85. Յելից սոցա կայ վիճակն ՏԻՌՏԻՒՆ, յարևմտից Պայէզիտու. 'ի սմա են ակունք Եփրատայ յարևմտեան հարաւային ծայրի, ուր ամբառնայ Ալաղաղ, այն է լեառն Ծաղկոյ 10,000' բարձր, և յելից նորա Ռուի, տեղիք Ճգնութեան և նահատակութեան Ս. Ոսկեանց, 'ի գաւառի ԾԱՂԿՈՏՆ. որոյ գլխաւոր տեղի ԶԱՐԵՀԱՒԱՆ Թուի մերձ կամ նոյն ինքն ՏԻՌՏԻՒՆ, յայլ